## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ <<ԱՂԱՎՆԱՁՈՐ>> ՀՈԱԿ

գ.Աղավնաձոր　　　　հեռ. 0281-6-11-91 , էլ. Հասցե ՝ hoak00@mail.ru

23. 03. 2015թ

N 03
<< ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/7>> ծածկագրով
գնման ընթացակարգով շրջանակային
համաձայնագրեր կնքած մասնակիցներին

ՀՀ Վայոց ձոր մարզի <<Աղավնաձոր>> ՀՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել շինանյութեր՝ <<-ՇՀԱՊՁԲ-11/7>> ծածկագրով մրցույթի շրջանակներում:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության գնային առաջարկն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ Վայոց ձորի մարզ, գ. Աղավնաձոր գյուղապետարանի հասցեով, <<Աղավնաձոր>> ՀՈԱԿ-ի հաշվապահ գնումների գործի համակարգման պատասխանատու Հ.Հայրապետյանին մինչև 2015թ. Ապրիլի 2 -ը, ժամը 16.$^{00}$-ն:

Գնային առաջարկներ պարունակող ծրարները կբացվեն ՀՀ Վայոց ձորի մարզի Աղավնաձորի գյուղապետարանի շենքում, 2015թ.ապրիլի 2 -ին, ժամը 16.$^{00}$-ին: Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել <ԳԱԿ- ՇՀԱՊՁԲ-11/7> ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:
Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը :
Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Աղավնաձոր>> ՀՈԱԿ-ի տնօրեն՝　　　　Ռ.Կարապետյան

Կատարող՝ Հ.Հայրապետյան

Հեռ.093805571

ՆԱԽԱԳԻԾ

**ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**ՇԻՆԱՆՅՈՒԹԵՐԻ ԳՆՄԱՆ**
**N ԾՀ ԱՊՁԲ 11/7**

գ.Աղավնաձոր ,, ,, 2015թ.

„ՀՀ Վայոց ձոր մարզի <<Աղավնաձոր>> ՀՈԱԿ-ի ի դեմս տնօրեն Ռ.Կարապետյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից -----------ի ի դեմս Ընկերության տնօրեն (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. Պայմանագրի առարկան**

Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված շինանյութեր(այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

**2. Մատակարարման պայմանները**

2.1 Վաճառողն Ապրանքը հասցնում է Գնորդին:

2.2 Ապրանքը մատակարարվում է սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան և ժամկետը սահմանվում է առնվազն տասն աշխատանքային օր, որի հաշվարկը կատարվում է սույն պայմանագիրը կնքելու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ Վաճառողը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

**3. Կողմերի իրավունքները և պարտականությունները**

**3.1 Գնորդն իրավունք ունի՝**

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ սույն պայմանագրի 1 կետում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ապրանք.

ա) Չընդունել Ապրանքը՝ իր հայեցողությամբ սահմանել անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 7.2 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայամանագիրը.

3.1.4.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը,

3.1.5 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

**3.2 Գնորդը պարտավոր է՝**

3.2.1 Կատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել վճարումները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն

քանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

**3.3 Վաճառողն իրավունք ունի՝**

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

**3.4 Վաճառողը պարտավոր է՝**

3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.3 Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.4 Հետ տանել Գնորդի կողմից սույն պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.5 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.6 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.7 Սույն Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.8 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել պատվիրատուին:

**4. Ապրանքի գինը և վճարման կարգը**

4.1 Սույն պայմանագի ընդհանուր գինը կազմում է՝ ՀՀ դրամ/----------------------/: Յուրաքանչյուր ապրանքատեսակի միավորի գինը սահմանված է սույն Պայմանագրի N2 հավելվածում: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա N 3 հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումը կատարվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի համար վճարելու վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները բավարարում են:

**5. Ապրանքի որակը և երաշխիքը**

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համար:

5.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

5.2.1 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

**6. Ապրանքի հանձնումը և ընդունումը**

6.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ: Վաճառողը՝ Ապրանքի հանձնման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 4):

6.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

**7. Կողմերի պատասխանատվությունը**

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով, որը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

7.3 Սույն պայմանագրի 1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.4 Սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.5 Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

7.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

**8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**9. Այլ պայմաններ**

9.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից:

9.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

9.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցում.

2) սույն պայմանագրով նախատեսված ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գների որոշվում են և դրանց փոփոխությունը գնահատվում է հետևյալ կերպ.

Սույն պայմանագրում չի կարող կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքների ծավալների, ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

9.5 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող և (կամ) Գնորդ) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են.

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձը:

9.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

9.7 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի NN 1, 2, 3 և 4 հավելվածները՝ բաղկացած-------. թերթից հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.9 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

**11.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

Պատվիրատու

ՀՀ Վայոց ձորի մարզ

Հասցե- <<Աղավնաձոր>> ՀՈԱԿ

<<Արդշինինվեստ>>բանկ,Եղեգնաձոր

մասնաճյուղ

ՀՀ 2475801352150010

ՀՎՀՀ08910204

Կ.Տ ստորագրություն

հավելված 1

«<ՇՀԱՊՁԲ 11/7>>» *ծածկագրով ԲԸԱՀ ընթացակարգով կայանալիք մրցույթի*

<<Շինանյութեր>> -Ի ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

Տեխնիկական բնութագիր

| N | Միջանցիկ կոդը՝ ըստ CPV դասակարգման | Ապրանքի անվանումը /չպատենտավորված՝ գեներիկ անվանումը/ | Չափ ման միավ որը | Ապրանքի տեխնիկական և այլ բնութս տվյալները |
|---|---|---|---|---|
| 1 | 44521210 | կողպեք | հատ | Միջին չափի |
| 2 | 14211000 | ավազ շինարարական | պարկ/25 կգ/ | Բնական ավազ բոլոր տեսակնե լվացված, աղազրկված: |
| 3 | 14212100 | խիճ | մ$^3$ | 3 մմ |
| 4 | 44111200 | ցեմենտ /400մ./ | կգ | 400 մարկա |
| 5 | 44930000 | կտրող քար | հատ | արծիվ 230 |
| 6 | 44315100 | էլեկտրոդ | կգ | Ռոնի 4 մմ |
| 7 | 44111412 | ներկ շինարարական | կգ | էպքիմ |
| 8 | 44167300 | անկյունակ | մ | 4մմ մետաղյա |
| 9 | 44118000 | մետաղյա թիթեղ | մ$^2$ | 3մմ հաստության |
| 10 | 44312300 | փշալար | Կգ | 4մմ հաստության |
| 11 | 42131100 | փական | հատ | ռեֆինգ,1/2 դույմ |
| 12 | 44163100 | խողովակ | մ | 3 դույմ,մետաղյա |
| 13 | 44163100 | խողովակ | մ | 6դույմ,ռետինե |
| 14 | 44163100 | Խողովակ | մ | 4.4դույմ մետաղյա |
| 15 | | դիտահոր | հատ | |
| 16 | 42131100 | փական | հատ | 2 դույմ,լատունից |
| 17 | 44167300 | անկյունակ /զգոն/ | հատ | 2 դույմ, երկաթյա |
| 18 | 38421100 | ջրաչափ | հատ | ռուսական |
| 19 | 42131100 | փական | հատ | 4 դույմ, լատունից |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 20 | 44163000 | խողովակ մետաղա-պլաստե | մ | 3/4 դույմ, ռիֆինգ |
| 21 | 44424200 | ժապավեն /նիպել/ | հատ | - |
| 22 | | Եզր\|ֆլանեց\|4.14 | հատ | |
| 23 | 44163100 | մետաղյա խողովակ 2դ. | մ | պատերի հաստություն՝ 2մմ |
| 24 | 31651100 | մեկուսիչ ժապավեն | հատ | Էլեկտրական լարերի համար |
| 25 | | Տնտեսող լամպեր | հատ | Խողովակաձև,ուղիղ,օղակաձև կա G-13 լամպակոթով: |
| 26 | 44322200 | մալուխ | մ | 4 մմ կաշվեպատ |
| 27 | 31687000 | էլ.կարգավորիչ | հատ | Մո ւ տք՝ 140V-300V - 50 Hz. Ել ք 5% - 390 Watt Փո խան ց մ ան ժամ 2 - 4 մ վ . Քաշ ը՝ 5.6 կ գ . չ ափս՝ 4 x 23.5ս մ : |
| 28 | 31681600 | էլ.ապահովիչ | հատ | Յ ալ ո ւ ն ապահ ո վ ի չ ՝ 40 Ա ան վ ան ակ ան հ ո ս ան ք ո վ , լ ար 220 Վ : Նախատե ս վ ած է գ ե ր բ ե և կ ար ճ մ ի աց ո ւ մ ն ե ր ի ժամ ա ո ւ ժայ ի ն գ ծ ե ր ի պաշ տպան ո ւ հ ամ ար : : |
| | | | | |
| | | | | |
| | | | | |

***Պատվիրատու***

*<<Աղավնաձոր>> ՀՈԱԿ*

***Վաճառող***

*ՀՀ Վայոց ձորի մարզ, գ.Աղավնաձոր*

*Հ/Հ 2475801352150010*

*<< Արդշինինվեստբանկ>> Եղեգնաձորի մ/ճ*

*ՀՎՀՀ 08910204*

*Տնօրեն* *Ռ.Կարապետյան*

*Կ.Տ*

Հավելված 2
“..... ............... 2015թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-11/7
ծածկագրով գնման պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| անվանումը Ապրանքի | Նախատեսվում է ֆինանսավորել<<Աղավնաձոր >> ՀՈԱԿ-Ի բյուջեով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում | | | |
|---|---|---|---|---|
| | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ | Ընդամենը Տարի |
| կողպեք | 25 % | 75% | 100% | 100 % |
| ավազ շինարարական | 25 % | 75% | 100% | 100 % |
| խիճ | 25% | 75% | 100% | 100 % |
| ցեմենտ /400մ./ | 25% | 75% | 100% | 100 % |
| կտրող քար | 25% | 75% | 100% | 100 % |
| էլեկտրոդ | 25% | 75% | 100% | 100 % |
| ներկ շինարարական | 25% | 75% | 100% | 100 % |
| անկյունակ | 25% | 75% | 100% | 100 % |
| մետաղյա թիթեղ | 25% | 75% | 100% | 100 % |
| փշալար | 25% | 75% | 100% | 100 % |
| փական | 25% | 75% | 100% | 100 % |
| խողովակ | 25% | 75% | 100% | 100 % |
| մետ. Խողովակ | 25% | 75% | 100% | 100 % |

| | | | | |
|---|---|---|---|---|
| խողովակ | 25% | 75% | 100% | 100 % |
| մետաղյա անկյունակ | 25% | 75% | 100% | 100 % |
| փական | 25% | 75% | 100% | 100 % |
| անկյունակ /զգոն/ | 25% | 75% | 100% | 100 % |
| ջրաչափ | 25% | 75% | 100% | 100 % |
| փական | 25% | 75% | 100% | 100 % |
| խողովակ մետաղա-պլաստե | 25% | 75% | 100% | 100 % |
| ժապավեն /նիպել/ | 25% | 75% | 100% | 100 % |
| Եզր/ֆլանեց/ | 25% | 75% | 100% | 100% |
| դիտահոր | 25% | 75% | 100% | 100% |
| էլ.լամպ | 25% | 75% | 100% | 100 % |
| էլ.լամպ | 25% | 75% | 100% | 100 % |

| | | | | |
|---|---|---|---|---|
| էլ.կարգավորիչ | 25% | 75% | 100% | 100 % |
| էլ.ապահովիչ | 25% | 75% | 100% | 100 % |
| մալուխ | 25% | 75% | 100% | 100 % |
| մեկուսիչ ժապավեն | 25% | 75% | 100% | 100% |
| | | | | |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով*

ԳՆՈՐԴ

*<<Աղավնաձոր>> ՀՈԱԿ*

*ՀՀ Վայոց ձորի մարզ, գ.Աղավնաձոր*

*Հ/Հ 2475801352150010*

*<< Արդշինինվեստբանկ>> Եղեգնաձորի մ/ճ*

*ՀՎՀՀ 08910204*

*Տնօրեն* *Ռ. Կարապետյան*

*Կ.Տ*

ՎԱՃԱՌՈՂ

Հավելված 4

Կատարող ------------------2015թ. կնքված

N ՇՀԱՊՁԲ-11/7 պայմանագրի

Պատվիրատու

ՀՎՀՀ

# ԱԿՏ N ___

## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«-----» ------------------ 2015թ.

Պայմանագրի անվանումը՝ <<Շինանյութեր>> ի ձեռքբերման:
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «-----» ------------------ 2015թ
Պայմանագրի համարը՝
Պատվիրատուն, ի դեմս --------------------------------------------------------------------------------
և Կատարողը՝ ի դեմս ----------------------------------------------------------------------------------------,
հիմք ընդունելով որ պայմանագրով նախատեսված՝ստորև նշված Ապրանքների մատակարարումները, աշխատանքները և ծառայությունները համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի) շրջանակներում Կատարողը «-----» ------------------ 2015թ.-ից «-----» ------------------ 2015թ.
ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

| Գնման առարկայի անվանումը | Գնման առարկայի քանակական ցուցանիշը | Աշխատանքների կատարման ժամկետը | Վճարման ենթակա գումարը (հազար դրամ) | Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի) |
|---|---|---|---|---|
| | | | | |
| ընդամենը | ------------ | ------------ | | ---------- |

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց ----------------------------------------

Անուն ազգանուն

Ստորագրություն

Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց ----------------------------------------

Անուն ազգանուն

Ստորագրություն

Կ.Տ

Հավելված 3
“......” ................ 2015թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-11/7
ծածկագրով գնման պայմանագրի

# ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Ապրանքի անվանումը | մատակարարման քանակը ըստ ամիսների, այդ թվում 2015թ.՝ | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Չափման միավորը | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ | Ընդամենը Տարի |
| կողպեք | հատ | 4 | 7 | 4 | 15 |
| ավազ շինար. | պարկ/ 25կգ/ | 45 | 89 | 44 | 178 |
| խիճ | $մ^3$ | 1.825 | 3.65 | 1.825 | 7.3 |
| ցեմենտ /400մ./ | Պարկ /50կգ/ | 9 | 17 | 9 | 32.7 |
| կտրող քար | հատ | 2.25 | 4.5 | 2.25 | 9 |
| էլեկտրոդ | կգ | 20 | 40 | 20 | 80 |
| ներկ շինար. | կգ | 1.5375 | 3.075 | 1.5375 | 6.15 |
| անկյունակ | մ | 4 | 10 | 5 | 19 |
| մետաղյա թիթեղ | $մ^2$ | 1.25 | 2.5 | 1.25 | 5 |
| փշալար | կգ | 12.5 | 25 | 12.5 | 50 |
| փական 1/2դույմ | հատ | 7 | 15 | 8 | 30 |
| խողովակ 2դույմ | մ | 13 | 25 | 12 | 50 |
| Խողովակ4.4 դույմ | մ | 4.7 | 9.4 | 4.7 | 18.8 |
| Խողովակ 3դույմ | մ | 4 | 7 | 4 | 15 |
| ռետինե խողովակ 6դ. | մ | 37.2 | 74.4 | 37.2 | 148.8 |
| փական 2դույմ | հատ | 2 | - | - | 2 |
| անկյունակ /զզոն/ | հատ | 2 | 4 | 2 | 8 |
| ջրաչափ | հատ | 2 | 5 | 2 | 9 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Փական 4դույմ | հատ | 2 | - | - | 2 |
| Խողովակ մետաղա-պլաստե 3/4դույմ | մ | 85.7 | 85.7 | - | 171.4 |
| Ժապավեն /նիպել/ | հատ | 3 | 6 | 3 | 12 |
| էլ.պահպանիչ | հատ | 3 | 6 | 3 | 12 |
| մեկուսիչ ժապավեն | հատ | 8 | 17 | 9 | 34 |
| Տնտեսող լամպեր | հատ | 34 | 68 | 34 | |
| Մալուխ 4մմ | մ | 80 | 161 | 80 | 321 |
| էլ կարգավորիչ | հատ | 2 | - | - | 2 |
| Եզր /ֆլանեց/ 4.14դույմ | հատ | 4 | 2 | - | 6 |
| դիտահոր | հատ | 2 | 2 | - | 4 |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |

| | |
|---|---|
| մատակարարման վայրը | Վայոց ձորի մարզ,Եղեգնաձորի տարածաշրջան |

ԳՆՈՐԴ

ՎԱՃԱՌՈՂ

*<<Աղավնաձոր>> ՀՈԱԿ*

*ՀՀ Վայոց ձորի մարզ, գ. Աղավնաձոր*

*Հ/Հ 2475801352150010*

*<< Արդշինինվեստբանկ>> Եղեգնաձորի մ/ճ*

*ՀՎՀՀ 08910204*

*Տնօրեն* *Ռ. Կարապետյան*

*Կ.Տ*